# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

## «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ կարիքների համար ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-23/02 ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.01.2023թ. ժամը 12.00-ին /Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Հ. Սարգսյան- «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ-ի տնտեսագետ

Անդամներ

Մ.Մալխասյան- «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ-ի հաշվապահ

Ռ.Մանուկյան -«Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ

Ն.Բաղդյան- «Գյումրու շտապ բուժ օգնության կայան» ՓԲԸ-ի հաշվապահ

Գ.Թաղեվոսյան- Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Գ. Պետրոսյան- «Գյումրու շտապ բուժ.օգնության կայան» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-23/02 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կազմակերպված շտկման վերաբերյալ

(Հ. Սարգսյան)

ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-23/02 ծածկագրով ընթացակարգի շտկման վերաբերյալ «Ալվանյան գրուպ» ՍՊԸ «Էյ բի էֆ» ՍՊԸ «Նատալի ֆարմ» ՍՊԸ սահմանված ժամկետում ուղարկել են բոլոր փաստաթղթերը :

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0**

2. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

«ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-23/02» ծածկագրով գնանշման հարցումով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և արձանագրվել է հետևյալը «Էյ բի էֆ» ՍՊԸ -ի կողմից շտկված հայտում նշված է տեղեկատվություն, որ տնօրեն հանդիսանում է Էդուարդ Փոթոյանը իսկ ըստ հավելված 1.3-ում նշված է, որ իրական շահառու հանդիսանում է Արման Դաշյանը տասն աշխատանքային օրվա ընթացքում կատարվել է ուսումնասիրություն՝ «Էյ բի էֆ» ՍՊԸ -ի կողմից հայտի տվյալների և ՀՀ Կառավարություն 13.10.2022 թվականի ընդունված N 1593-Ն որոշման 121-րդ կետի հիմքերի հայտնաբերման մասով որով ասում է՝ «121. Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, իսկ փոխկապակցված անձ հասկացությունը Կարգավորվում է ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ մասի գ և դ ենթակետերով որում ասված է որ

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

Ուսումնասիրելով դա հանձնաժողովը նկատել է, ԱԿԱԷՄ ՍՊԸ-ի կողմից ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-22/դեղ/1 ծածկագրով գնման ընթացակարգում մասնակցած ԱԿԱԷՄ ՍՊԸ-ն գտնվում է գնումների գործընթացի մասնակիցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում 1526-րդ տողում որի մեջ իրական շահառուների մասին տեղեկատվությունում առկա են հիմքերը մասնավորապես անձնագրային տվյալներ տնօրենի անուն ազգանուն և հասցեական տվյալները որոնք ապացուցում են այն փաստը, որ անձիք նույնական են: Ելնելով վերոգրյալից և Ղեկավարվելով ՀՀ Կառավարություն 13.10.2022 թվականի ընդունված N 1593-Ն որոշման 121-րդ կետով մերժել «Էյ բի էֆ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը :

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

## 3.Մասնակիցների առաջարկած գների մասին.

(Հ.Սարգսյան)

Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները ըստ հավելված 1-ի. կցվում է

Հաշվի առնելով այն փաստը որ 5,9,10-րդ չափաբաժինների մասով մասնակիցները ներկայացրել են բարձր գնային առաջարկ և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 6-րդ ենթակետը

6) եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Սույն պարբերության պահանջները չեն կիրառվում էլեկտրոնային աճուրդով գնում

կատարելու ընթացակարգի դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ հրավերի պահանջներին բավարար է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ. Ինչպես նաև Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 526-ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ 2 չափաբաժնի մասով մասնակիցների հրավիրել բանակցությունների:

4.Ընտրված գրաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Հ.Սարգսյան)

Ստորև ներկայացվում է ԳՇԲՕԿ-ԳՀԱՊՁԲ-23/02 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ցանկը՝ ըստ չափաբաժինների

| ընտրված մասնակից | Չափաբաժնի համար |
|---|---|
| Լեյկո ՍՊԸ | 1,2,4,5,8 |
| ՄԴԴ գրուպ ՍՊԸ | 3,6,11 |
| Նատալի ֆարմ ՍՊԸ | 7,13,14,15,17 |
| Մեդտեխսերվիս ՍՊԸ | 9,10,12,19 |
| Ասլանյան գրուպ ՍՊԸ | 16 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ.Սարգսյան)

5.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը, հայտարարել անգործության ժամկետ 10 օրացուցային օր 1,2,3,4,6,7,11,13,14,15,17,19 չափաբաժինների մասով ինչպես նաև հաշվի առնելով Գյումրու Շտապ բուժական օգնության ծառայության անհետաձգելիությունը անհարժեշտության դեպքում կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի

Հոդված 441. Պայմանագրի գործողությունը

. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից:

2. Կողմերն իրավունք ունեն սահմանելու, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

5.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 4-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը՝ ընտրված մասնակիցներին անգործության ավարտի հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

5.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ ենթակետը 5,8,9,10,12 չափաբաժինների մասով անգործության ժամկետ չի սահմանվում

5.4. Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդված 3-րդ ենթակետը 8 չափաբաժինները հայտարարել չկայացած

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ______ Հ.Սարգսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______ Ն.Բաղալյան

______ Մ.Մալխասյան

______ Ռ.Մանուկյան

______ Գ. Թադևոսյան

Քարտուղար՝ ______ Գ.Պետրոսյան